ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

ԿՈԴ
050.0093 Ա. 26.04.17

26 ապրիլի 2017 թվականի թիվ 93 Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 31-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Որոշում է.

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրը:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ **Արթուր Ջավադյան**

2017 թ. ապրիլի 26
Երևան

ՀՀ կենտրոնական բանկի եզրակացությունը
«ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ[1]

2016 թվականին տնտեսական ակտիվությունը դանդաղել էր՝ պայմանավորված գյուղատնտեսության և շինարարության ճյուղերի իրական ծավալների նվազումներով: Տարվա արդյունքում տնտեսական աճը կազմել է 0,2 տոկոս՝ նախորդ տարվա 3,0 տոկոսի և տարվա համար կանխատեսված 2,2 տոկոս ցուցանիշի դիմաց: Այդուհանդերձ, դրական զարգացումներ են արձանագրվել արդյունաբերության և ծառայությունների ճյուղերում, որոնց իրական աճը կազմել է համապատասխանաբար՝ 5,1 և 4,1 տոկոս: ՀՀ տնտեսության ակտիվության դանդաղումը հիմնականում պայմանավորված էր վերջին տարիների ընթացքում ներքին և օտարերկրյա զուտ ներդրումների կրճատմամբ, պղնձի և այլ հանքահումքային ապրանքների միջազգային գների նվազմամբ, ՌԴ-ից դրամական փոխանցումների նվազման հետևանքով տնային տնտեսությունների տնօրինվող եկամուտների կրճատման ազդեցությամբ: Նման միջավայրում շարունակվել է մասնավոր ներդրումների նվազումը, մինչդեռ մասնավոր սպառման մասով նկատվել են աճի վերականգնման միտումներ[2]:

Հարկ է նշել, որ երկրորդ եռամսյակից սկսած նկատվել են համախառն պահանջարկի որոշակի վերականգնման միտումներ, ինչը արագացել և կայունացել է չորրորդ եռամսյակում՝ դրսևորվելով մասնավոր սպառման աճի համեմատաբար բարձր մակարդակի ձևավորմամբ և մասնավոր ծախսումների նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ նվազման տեմպի կրճատմամբ: Այսպես, ողջ 2015 թվականի ընթացքում արձանագրվել է մասնավոր սպառման նվազում, որից հետո՝ միայն 2016 թվականի երկրորդ եռամսյակից սկսած նկատվել է մասնավոր սպառման դանդաղ աճ, իսկ տարվա չորրորդ եռամսյակում աճը նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ կազմել է 2,9 տոկոս:

Համախառն պահանջարկի բարելավման նման զարգացումները պայմանավորված էին տնտեսական ակտիվության աճի վերականգնմանն ուղղված՝ ՀՀ կառավարության կողմից իրականացված հարկաբյուջետային ընդլայնող քաղաքականությամբ, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից դեռևս 2015 թվականի վերջից սկսված և շարունակական բնույթ կրող դրամավարկային պայմանների թուլացմամբ՝ ուղեկցվելով ցածր գնաճի պայմաններում եկամուտների գնողունակության պահպանմամբ:

---

[1] Սույն փաստաթղթում բերված թվային տվյալները վերցված են ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետությունը հաստատելու մասին» ՀՀ Ազգային Ժողովի որոշման նախագծից, որը ՀՀ կառավարության կողմից ս/թ ապրիլի 20-ին հավանության է արժանացել:

[2] 2016 թվականին ՀՀ մասնավոր ներդրումները նվազել են 12,1 տոկոսով նախորդ տարվա 2,4 տոկոսի, իսկ մասնավոր սպառումն աճել է 1 տոկոսով նախորդ տարվա 7,9 տոկոս նվազման դիմաց:

Ցածր գնաճային միջավայրը նպաստել է գնաճային սպասումների նվազմանը, որն էլ արտացոլվել է շուկայական տոկոսադրույքների մակարդակում. նվազել են ինչպես պետական պարտատոմսերի եկամտաբերությունը, այնպես էլ վարկավորման տոկոսադրույքները: Իսկ հարկաբյուջետային ընդլայնող քաղաքականությունն իրականացվել է և՛ պետական սպառման, և՛ պետական կապիտալ ներդրումների աճի ապահովման ուղղությամբ, որի արդյունքում 2016թ. պետական բյուջեի պակասուրդը ՀՆԱ-ում 2.0 տոկոսային կետով գերազանցել է տարվա համար ծրագրված մակարդակը և 0.7 տոկոսային կետով՝ նախորդ տարվա ցուցանիշը:

Ստեղծված իրավիճակում, թեև մասնավոր ծախսումներով պայմանավորված ներքին պահանջարկի նվազումը նախորդ տարվա նկատմամբ էապես մեղմվել է (2015 թվականի՝ 5,5 տոկոս նվազման դիմաց այն կազմել է 0,4 տոկոս), 2016 թվականի տնտեսական աճին շարունակել է հիմնական նպաստումն ունենալ զուտ արտահանումը՝ ի շնորհիվ ներմուծման նկատմամբ արտահանման զգալի առաջանցիկ աճի: Արդյունքում ապահովվել է երկրի արտաքին հաշվեկշռվածությունը՝ ընթացիկ հաշվի պակասուրդը պահպանվել է նախորդ տարվա նույն՝ ՀՆԱ-ում 2.7 տոկոս մակարդակում: Այսպիսով, տարվա ընթացքում տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժերը եղել են ծառայությունները և արդյունաբերությունը, իսկ ամբողջական պահանջարկի տեսանկյունից՝ սպառման և արտահանման բարելավումը:

Ինչպես արդեն վերևում նշել ենք, տարվա ընթացքում տնտեսության թույլ ակտիվությունը խթանելու նպատակով ՀՀ կառավարությունն իրականացրել է խթանող հարկաբյուջետային քաղաքականություն, որը ձևավորվել է թե՛ ծախսերի, թե՛ եկամուտների համախառն պահանջարկի վրա ունեցած ընդլայնող ազդեցության դրսևորումներով: Այսպես, հարկաբյուջետային ազդակի գնահատված ցուցանիշը եղել է դրական: Ընդլայնող հարկաբյուջետային քաղաքականության արդյունքում ՀՀ պետական բյուջեի պակասուրդը 54 տոկոսով գերազանցել է տարվա համար կանխատեսված մակարդակը, որի պարագայում պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 5.5 տոկոս: Բնականաբար, պակասուրդի նման աճը անդրադարձել է ՀՀ պետական պարտքի վրա և ՀՆԱ կանխատեսվածից ցածր մակարդակի ձևավորման պայմաններում հանգեցրել է պարտք/ՀՆԱ ցուցանիշի զգալի աճի և կազմել ՀՆԱ-ի 56,7 տոկոսը: Այս պարագայում հետագա հարկաբյուջետային քաղաքականությունը սահմանափակված է պետական պակասուրդի հարկաբյուջետային կանոնով, որը կարևոր է պետական պարտքի կառավարելիությունը պահպանելու և կայունությունն ապահովելու տեսակետից:

Անդրադառնալով գնաճին, նշենք, որ 2016թ. ընթացքում գնաճը պահպանվել է ցածր մակարդակի վրա և ԿԲ կանխատեսումներից ցածր է գտնվել: Վերջինիս մեծապես նպաստել էր միջազգային ապրանքային շուկաներում պահպանվող գնանկումային միտումների ազդեցության փոխանցումը ներքին գների վրա, դրամական փոխանցումների նվազման շարունակումը և պարենային ապրանքների գների ցածր մակարդակների ձևավորումը: Ցածր գնաճային միջավայրը

գնահատելով՝ ԿԲ-ն տարվա ընթացքում շարունակել է ընդլայնողական դրամավարկային քաղաքականության իրականացումը: Ընդհանուր առմամբ, տարվա ընթացքում վերաֆինանսավորման տոկոսադրույքն իջեցվել է 2.5 տոկոսային կետով՝ և դեկտեմբերի վերջին սահմանվել **6.25%**: Նշված ժամանակահատվածում դրամավարկային պայմանների թուլացումն արտացոլվել է տոկոսադրույքների վարքագծում, որի մասին են վկայում քաղաքականության տոկոսադրույքի նվազմանը զուգընթաց շուկայական տոկոսադրույքների և պետական պարտատոմսերի եկամտաբերության նվազումը՝ կորի ողջ երկայնքով: Այսպես, 2016 թվականին տեղաբաշխված պետական արժեթղթերի միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 11,1 տոկոս՝ 2015 թվականի 14,6 տոկոսի դիմաց: Չորրորդ եռամսյակից համախառն պահանջարկը սկսել է վերականգնվել, ինչը նպաստել է գնանկումային միջավայրի չեզոքացմանը. արձանագրվել է 2.7% գնաճ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 1.9%-ի դիմաց, որի պարագայում 12-ամսյա գնաճը տարեվերջին կազմել է -1.1%:

ՀՀ տնտեսության թույլ ակտիվության պայմաններում, ՀՀ պետական բյուջեի եկամուտները և դրամաշնորհները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել են 0,3 տոկոսով, իսկ հարկերն ու տուրքերը՝ 1,1 տոկոսով՝ ապահովելով տարեկան ճշգրտված ծրագրի 92 տոկոսը: Հարկերի և տուրքերի աճին դրականորեն են նպաստել ներքին տնտեսությունից հավաքագրված հարկերը և բացասաբար՝ ներմուծման հարկերը: 2016 թվականին հարկային եկամուտների աճն ապահովվել է ուղղակի հարկերի հաշվին՝ պայմանավորված հիմնականում եկամտային հարկի, շահութահարկի, ակցիզային հարկի, շրջանառության հարկի, նպատակային սոցիալական վճարների աճով, իսկ ավելացված արժեքի հարկի, մաքսատուրքի ու բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով մուտքերը նվազել են:

2016 թվականին պետական բյուջեի հարկերի և տուրքերի մասնաբաժինը ՀՆԱ-ում փոքր-ինչ՝ 0,1 տոկոսային կետով բարելավվել է, թեև 0,6 տոկոսային կետով զիջել է տարվա համար կանխատեսված մակարդակը՝ կազմելով ՀՆԱ-ի 21.3 տոկոսը: Հարկային սահունության գործակիցը 2016 թվականին կազմել է 1.6՝ 2015 թվականի 0.1-ի դիմաց:

ՀՀ պետական բյուջեի ծախսերի ծրագրված մակարդակի կատարման վերջին տարիներին արձանագրված համեմատաբար բարձր ցուցանիշի ապահովումը շարունակվել է նաև 2016 թվականին: Այսպես, 2016 թվականին ծախսերի ծրագրված մակարդակի կատարումը կազմել է ավելի քան 99 տոկոս, որն ուղեկցվելով ծախսերի անվանական մեծության 2,8 տոկոս աճով հանգեցրել է ՀՆԱ-ի նկատմամբ ծախսերի 0,6 տոկոսային կետ աճի: Տարվա արդյունքում ընթացիկ ծախսերն աճել են 3.5%-ով, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի աճը կազմել է 1,7 տոկոս:

Այսպիսով, 2016 թվականի ընթացքում տնտեսական թույլ ակտիվության բացասական հետևանքները մեղմելուն ուղղված ՀՀ պետական բյուջեի ծրագրված

ծախսերի համեմատաբար բարձր կատարողականի և ՀՀ պետական բյուջեի եկամուտների ծրագրված մակարդակի ավելի ցածր կատարողականի պայմաններում ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է 278 մլրդ դրամ՝ տարեկան ճշտված ծրագրով նախատեսված 180 մլրդ դրամի դիմաց: Ընդ որում, ՀՀ պետական բյուջեի պակասուրդի ծրագրված մակարդակի գերազանցումը ֆինանսավորվել է պետական պարտատոմսերի տեղաբաշխումից, ինչպես նաև արտաքին վարկերի գծով տարվա համար նախատեսվածից ավելի ստացված միջոցների հաշվին:

Զգալիորեն փոխվել է պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը՝ ի հաշիվ ներքին աղբյուրների տեսակարար կշռի աճի: Այսպես, 2016 թվականին ֆինանսավորման ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորվել է պակասուրդի համապատասխանաբար 38.6 և 61.4 տոկոսը, այն դեպքում, երբ 2015 թվականին այդ ցուցանիշները կազմում էին համապատասխանաբար՝ 4.7 և 95.3 տոկոս

Պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրների աննախադեպ մեծ աճի ձևավորմանը նպաստել է նաև դրամավարկային ընդլայնողական քաղաքականության հետևանքով տարվա ընթացքում բանկային համակարգում ձևավորված ավելցուկային իրացվելիության էական աճը, որն ուղեկցվելով տոկոսադրույքների նվազմամբ, զգալի պահանջարկ էր առաջացրել պետական պարտատոմսերի նկատմամբ: Արդյունքում, տարվա վերջի դրությամբ շրջանառության մեջ գտնվող պետական գանձապետական պարտատոմսերի ծավալը նախորդ տարվա համեմատ աճել է 58.5%-ով կամ 187.6 մլրդ դրամով, տարվա համար ծրագրված 42,0 մլրդ դրամի դիմաց: 2016 թվականին ներքին պետական պարտքը բնութագրող հիմնական ցուցանիշները հետևյալն են. շրջանառության մեջ եղած պետական գանձապետական պարտատոմսերի եկամտաբերությունը կազմել է 13.15%՝ 2015 թվականի 13.99%-ի դիմաց, պարտքի ժամկետայնությունը՝ 2208 օր (2015թ.՝ 2065 օր), մարման բեռի բաշխվածությունը մինչև 2036 թվականն է:

Ընդ որում, 2016 թվականի դեկտեմբերին՝ նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը նվազել է շուրջ 5,0 տոկոսային կետով՝ կազմելով միջինը 6,9 տոկոս, միջնաժամկետ պարտատոմսերինը՝ 5,4 տոկոսային կետով՝ կազմելով միջինը 10,1 տոկոս, իսկ երկարաժամկետ պարտատոմսերինը նվազել է 3,7 տոկոսային կետով և կազմել միջինը 12,9 տոկոս:

Ամփոփելով նշենք, որ տնտեսական աճի բարձր տեմպերի վերականգնման և պարտքի արդյունավետ կառավարման քաղաքականության շարունակականության պահպանմանն ուղղված 2016 թվականի հարկաբյուջետային քաղաքականության ծրագրերի, և դրանք դրամավարկային քաղաքականության հետ կոորդինացված իրականացման շարունակականության ապահովման պայմաններում հնարավոր կլինի նախապայմաններ ստեղծել տնտեսական աճի կայունացման համար: Միևնույն ժամանակ, ելնելով երկարաժամկետ հորիզոնում բարձր և կայուն տնտեսական աճի

հիմքերի ապահովման առաջնահերթությունից՝ այսուհետ առավել կարևորվում է ներդրումների խթանման և կառուցվածքային բարեփոխումների իրականացման ուղղությամբ ՀՀ կառավարության ծրագրերի հետևողական և արդյունավետ իրականացումը: